

զիւ. ինչուան բարի գործոց մէջ ալ
միշտ երկորդական վախճան մը կ'են-
թադրէ՝ պարզ չը գովելու համար :
Լիտուան պահէ զիս չարասրտին լե-
զուէն ու մարդասպանին սրէն :

Ի՞նչ բռնմ' այն ողորմելիներուն որ
ընկերութեանց միմօր կը դառնան
և ամեն տեսակ խեղկատակութիւն
կ'ընեն : սրուէս զի ուրիշները խնտա-
ցընեն , Բ'նչ բռնմ' այն անառակնե-
րուն ու ամբարշտներուն որոնք ան-
պարկեշտ ու պիղծ բաներ կը խօսին .
և կ'ուզեն սրբոց ու սրբազան բանե-
րու վրայ ծիծաղել :

Այսպիսեաց հետ , ո՞վ պատանեակ
մասնակցութիւն չունենաս : Ի՞նչ ըն-
կերութեան հաճոյ ու սիրելի ըլլալու
համար միշտ նոյնպէս զուարթ եղիւր ,
խառովաշնները հաշտեցուր , երախտա-
գէտ եղիւր նաեւ ամենէն ոչինչ բա-
ներու : և որուն սր կրնամ' սրտանց ու
չուտով ծառայէ : Ի՞նչ խրատներդ
պահէ . երբ կը տարակուսիս թէ ինչ
պէս պէտք է վարուիս , իմաստուն եւ
բարեխիտ անձանց խորհուրդ հարցուր
ու շնորհակալ եղիւր . եթէ գիտես որ
մէկը վրշտ մը ունի , վազէ մխիթարէ .
եթէ մէկը մահացած կը տեսնես , ա-
նուէ խօսքով մը պիտիէ : Երբ օրինակ
զգեստներ ու շարժմունքներ չունե-
նաս , ոչ տրանջուցող և ոչ պարծենկոտ
ըլլաս : Խօսակցութեանց մէջ խելացի
բարեսրտութենէ մը աւելի ակոխութիւն
բան չկայ :

Վերջապէս կը փափաքիմ որ քաղ-
ցրաբարոյ ըլլամ' բայց ոչ թեթեւա-
միտ , ծանրաբարոյ՝ բայց ոչ պահան-
ջող , ճիշդ՝ բայց ոչ անտի ու ձանձրա-
ցուցիչ , խահական՝ ոչ յամառ , ան-
պաշտօն՝ ոչ կծծի , մեծերը յարգող ,
հաւասարներու հետ պարկեշտ և բա-
ստորնագունից հաճոյ : Եւ փափաքիմ՝
դարձեալ որ խօսակցութիւնդ ալ

գործողութեանցդ ու սրտիդ պէս
պայծառ աղատ համարձակ ըլլայ : և
քեզի հետ խօսողը ժամանակը պա-
րապ անցուցած չկարծէ :

(Պիպի լարանդի)

ՕՐՈՒՅՆՏՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏՈՒՄԻ ԶԵՆՈՒՄՈՒՄ

Փառանքի . — Ղիտէք դուք , սիրե-
լի քոյրեր , որ այսօր տուն է : դատա-
տուք չլսիտի գան ուսումնարան ,
վարժուհին ալ երեկոյեան պատուի-
րեց , որ սոյն օրը անօգուտ չանցնենք
տուներու մէջ . այլ դասարան ժողո-
վինք , գիրք կարդանք , իրարու բան
խօսենք և գեղեցիկ խօսակցութե-
անք պատկենք :

Չարուհի . — Ի՞նչ գիտենք , որ
ինչ խօսինք , աւելի լաւ է որ սպասենք
մինչև Վարժուհին գայ բան մը պատ-
մէ , մենք ալ լսենք :

Խառովեղութիւն . — ()՛հ , դուն ալ
միշտ կուլաս , Չարուհի , ամենէն
շատ կը կարդաս , ամենէն լաւ դատ կ'ը-
սես և միշտ կը գանգատիս , որ բան
մը չը գիտես : Ի՞նչ կ'ը գիտենք
անոր վրայ խօսելու ենք , փիլիսոփա
յութիւն չը պիտի ընենք , որ այդչափ
կը գիտարացնես : Ի՞նչ մ'ալ որ չը
գիտենք , միթէ չե՞նք կարող նստիլ
Լիդիէի պատմութիւնը կարդալ և ի-
րարու պատմել , որ խիստ ալ յարմար
է , որովհետեւ այսօր Վարդանանց
տունն է :

Սառնակ . — ()՛եպի . Վարդանի
պատկերը նայելով , որ դասարանի պա-

տի վրայ կախուած է) — Վարդան ըսիր
բան մը միտքս եկաւ, որ շատ անգամ
կամեցած եմ հարցնել, բայց չեմ վրա
տահայեր: — Ի՞նչու: Վարդանի պատ-
կերին քով իր առաքինի սամուսնայն
կամ մէկ ուրիշ նախնի Հայ կնոջ պատ-
կեր մ'ալ չըկայ, որ իմանայինք թէ
նոյն ժամանակի Հայ կանայք ի՞նչ կեր-
պարանք ունէին և ի՞նչ կը հագնէին:
Լճա՞ Վարդանին կը նայինք, որ քաջ
գիւցազուն մ'է: (ամենքն ալ կը նա-
շին Վարդանի պատկերին) Երցունա-
գարդ սաղաւարտը գլխին, պրզովա-
տիկ սուրը մէջքը և նախարարանշան
դաստակալը ձեռքին, Վառվառն աչ-
քերն ու վաճառատն գէմքն ալ կը ցուց-
նեն, որ խորհելու մէջ մեծիմաստ է
եւ գործելու մէջ եռանդոտ: Ս'որ
դպրոցը օրիորդաց դպրոց է, և ահա
գիւցազունի պատկեր մը կախուած է:
Բայց ի՞նչքան սրտառու է կ'ըլլար, ե-
թէ Հայ գիւցազուն հայ մը կամ զա-
ւակասէր մօր մը պատկերն ալ գտնու-
էր հոն, որ ամեն օր դիտէինք: Ի-
րաւ կըսեմ, եւ Վարդանը շատ կրտսեր
և անոր անմահ յիշատակը 'ի բոլոր սրբ-
տէ կը պատուեմ. բայց գիտեմ որ ես
աղջիկ մ'եմ, Վարդան չեմ կարող
ըլլար, սակայն եթէ հասուհայ մը
բուն հայեցի ձեւն ու հագուստը տես-
նէի, կ'ուզէի անոր նմանիլ: Շատ ան-
գամ կը մտածեմ և չեմ կրնար ճիշտ
պատկերացնել մօքիս մէջ թէ ի՞նչ է
Հայ կինը:

Փառանքի՞մ. — Տեսնա՞ք ահա, թէ ի՞նչ
պէս խօսքը՝ խօսք կը բանայ: Եկի՛ց
աւելի ի՞նչ կարի որ խօսակցութիւն
կ'ուզէք: Սահականոյ՞նը մտածե՛ր է հայ
կնոջ մասին և իր բազմանքը չէ՛ կա-
րողագեր քահանայէ՛: Երգե՛ք չէ՛ք կը-
նար մենք այս բանի վրայ խօսիլ, որ
կարեւոր է օգուտ մ'ալ քաղենք:

Օտարի՞նք. — Խօսիլ կարող ենք, բայց

պարտալ խօսելն ի՞նչ օգուտ կ'ընէ, քա-
նի որ այդ մասին օրինաւոր բան մը չը
գիտենք: Եւ գարծնալ կ'ըսեմ, աւելի
լի լաւ է, որ ամենքս մեր գիրքը առ-
նենք, հանգիստ նստինք և կարդանք:
Քան թէ շատ փաստութիւն ընենք, ու-
րուն համար Վարդանին ալ գուցէ
գայ տեսնէ և որոտմի:

Երանգի՞նք. — Ետուած սիրես, Ծա-
րուհի, այդ սուտ համեմատութե-
անդ թող և մեր խօսակցութեանը ար-
գելք մի լինիր: Վարդանին յիշու-
ւոր բանի վրայ խօսելու համար ին-
չու պիտի նեղանայ: Չէ՞ որ նորա նե-
ղութիւնը և զգուշութիւնը ունայն և
անշահ խօսքերու համար է: Եթէ
այժմէն գեղեցիկ մտածմունքերու և
խօսակցութեան չը փարմինք, չէ՛ ար-
վերջը մենք ալ այն կանանց նման կ'ըլ-
լանք, որոնք բամբասանքէն աւելի ուր-
իշ բան չը գիտեն և չապ անգամ ալ
պարագութենէն՝ անմեղ տեղը ասոր
անոր վրայ մուր կը բանեն: Եթէ մենք
ալ անանկ ըլլանք, ո՞ր կը մնայ տար-
մեր ուսմունքը, մեր վրայ եղած խը-
նամբը և յոյսը: Խօսքը լաւ բացուած
է, թող մտածենք որչափ կարող ենք՝
թէ ի՞նչ է Հայ կինը:

Սարգիսի՞նք. — Լճա՛ քեզ նոր փիլիսո-
փայութիւն է: Հայ կինը ի՞նչ պիտի ըլ-
լայ: Հայ կինը՝ յոյի ժամանակէն 'ի
վեր հայ կին է. նոր արարած մը չէ
որ անոր ի՞նչ ըլլալը նոր քննենք և ի
մանանք:

Տիգրանի՞նք. — Սթինիին ալ Օւ-
րուհիի գաղափարէն է, աւելի կա-
տակելու փափաք ունի, քան թէ մի-
տածելու և խօսելու: Սթինիին հա-
մար ալ Հայ կնոջ վրայ խօսիլը արժէք
չունի: Երգպէս ըսած են, որ աշ-
խարհի ներկայ պատմութեան մէջ
շատ ու քիչ հայ մարդու անուն կայ,
բայց հայ կնոջ անուն ամենեւին չը

կայ : Այդպէս ըրած են, որ այսօր Հայ
կանայք իրենք ալ չը գիտեն թէ ինչ
են ։ վասն զի ամեն երկիրներու մէջ
իրենց սեպհականութիւնը կորուսած՝
ուրիշ ազգերու կանանց հետեւած են ։

Երաւիր . — Երանի՛ր թէ լու բանե-
քուն հետեւած ըլլային ։ Գժազ-
դարար, ինչ որ հին ազգերէն առած
են, հերեք չէ ։ այսօր ալ նոր ազգաց
կրթութիւնը թողած՝ անոնց պէնս-
սիրութիւնը, շուտութիւնը և ու-
րիշ պահասութիւնները առնելու վը-
ջայ են ։ Ի՞նչ խղճալի բան է, կարծես
թէ եւրոպացւոց լուսաւորութիւնը
մինչեւ մեզ կը հասնի՝ կը մարի և մի-
այն ծուխը կը մնայ մեզ ։

Սանտիանյո . — Բայժգ Հայ կանանց
նկատմամբ խիստ ճշմարիտ է ։ Արդարեւ
ես շատ գիրք չեմ կորդացեր, բայց
հօրմէս ըսած եմ, որ լուսաւոր ազգե-
րու մէջ հեղինակ կանայք կան ։ զա-
ւակները դաստիարակող մարեր կան,
մանաւանդ Ամերիկայի կանանց և
աղջկանց մասին ըսած եմ, որ ոչ թէ մի-
այն աղջկանց, այլ և տղայոց դպրոցնե-
րու և համալսարաններու մէջ ունգամ՝
գաստիարակները կանայք են ։ Ի՞նչու,
ըսէ ։ — Որովհետեւ կին գաստիարակ-
ները աւելի փափկասիրտ են, համբե-
րող են, զգացուն են և բան տատմե-
լու և հասկացնելու մէջ աւելի յաջ-
գակ են քան թէ տղամարդիկը ։ Հիմա
ձեզ կը հարցնեմ. Հայ կանայք այս
գեղեցիկ յատկութեանց ո՞րն կ'աշխա-
տին ստանալ ։ Թողունք վարժարաննե-
քու ուսուցչութիւնը, գտնէ կ'աշխա-
տին ընտանեաց մէջ՝ իրենց զուակնե-
րը՝ կրթելու չափ դաստիարակութիւն
ստանալ ։ Եսացէք խնդրեմ, որ կա-
տարելութիւնը կ'ուզեն ստանալ ։

Փառանկեմ . — Եւ ոչ մէկը, այլ մի-
այն նորասիրութիւն, այլ միայն աչք
խաբէրու զարդեր ։ Երանի՛ր թէ իրենց

ունեցած քիչ աւ շատ կատարելու-
թիւններն ալ չը կորսնցնէին ։ Այսին
թէ այնպիսի հացեր կան շատ քաղաքնե-
րու մէջ, որ իրենց աղջկաները հացե-
րէն խոսիլ չը գիտեն ։ բայց շատ ըս-
տակներ կը մտնեն և ուրիշ լեզունե-
րու մէջ կը վարժեցնեն ։ Այնպիսիներն
ալ կան, որ ուստելու հաց չունին, բայց
ստիպուած են շատ անգամ քաղցած
մնալ և իրենց կանանց և աղջկանց նո-
րասիրութեան ամեն հաճոյքը կատա-
րել և նորանոր զարգերով զարգարել ։
Բայց ինչ օգուտ, սիրամարդն ալ գե-
ղեցիկ փետուրներ ունի, սակայն ողբե-
րը ամուսին պէս սեւ են ։ Այսպէս
ալ անգաստիարակ և պէնսուէր կինն
ու աղջիկը ։ Ինչ որ ընեն, դարձեալ
իրենց անկրթութիւնը կամ սեւա-
թիւնը կ'երեւի ։ Սանաւանդ, ինչ ա-
մօթ բան է, երբոր կին մը իր ամուս-
նայ և աղջկի մը իր ծնողաց կարողու-
թենէն վեր զարգարուած է ։ Ի՞նչ
խղճալի բան, երբ կին մը զարգերու
մէջ արժանաւորութիւն կրփնտէ ։

Խարովդեղոս . — Աւելի լաւ է ըսել ։
Ինչ սգիտութիւն ։ վասն զի, ամեն պա-
կասութիւն սգիտութեան հետեանք
է ։ Այն կինը, որ իր զաւակաց դա-
ստիարակութիւնը թողած՝ զարգե-
րու վրայ կը մտածէ, տգէտ է ։ Այն
կինը, որ նանրասիրութեամբ իր ա-
մուսնոց սիրտը կը գտնացնէ, տգէտ
է ։ Այն օրիորդը, որ իր արտաքին պը-
րանքներով կ'ուզէ ամուսնանալ և ոչ
թէ իր կրթ գգացմունքով և վայելուչ
վարմունքով, տգէտ է ։ Այն կինը որ
խորհիլ ու դատել չը գիտէ, այլ միայն
խելքը աչքերուն մէջն է, տգէտ է ։
Որ մէկը թուեմ, ընտանեկան խռ-
վութիւն, ամուսնական տառնութիւն
զաւակաց անխնամութիւն և ամեն
տեսակ թերութիւն ։ բոլորն ալ տգի-
տութեան հետեւանք են ։ Բանի որ

հայ կանայք և աղջկուհիք մտածելու և լաւն ու վատը որոշելու չեն վարժած, զարմանալի բան չէ ուրեմն, որ շատերուն մէջ ոչ թէ օտարազգի կանանց առաքիտութիւնները, այլ մուսլթիւնները ճարակ կը գտնեն: Երանի թէ Հայ կանայքը նորասէր ըլլալու տեղ՝ մաքրասէր ըլլային, թէ ընտանեկան կեանաց մէջ և թէ հագուստի: Պարզ հագնէին և պարզ ապրէին, բայց երկուքի մէջ ալ մաքրութիւն սիրէին: Եւ այնպէս գիտեմ, որ մաքրասիրութիւնը շատ թանկագին բաներէ աւելի թանկագին է:

Սովորիկ. — Եւ այլ, նայէ, Օտարուհի, թէ ուստի սկսան և մեր եկան. իբր թէ պիտի բացատրէին թէ քիչ է հայ կինը: Հիմա սկսած են գիտութեան և մաքրութեան վրայ խօսիլ, որ եթէ թողնես, մինչեւ իրիկուն չեն վերջաւորեն: Եսնոց ըրածն ալ նոր տեսակ քարոզութիւն մ'է, հայ կինը բնաբան զնեւ և ուրիշ բաներու վրայ խօսիլ: Ի հարկէ, անձնապատասանները այսպէս կ'ըլլան: Եւ ելի լաւ չէր ըլլար առաջուց խօստովանէին, որ հայ կնոջ վրայ խօսիլն իրենց խելքի բանը չէ:

Եւսն. — Այն ներէս, Սովորիկ, լաւ քարոզիչներն ալ շատ քարոզելով գեղեցիկ խօսելու կը վարժին: Եւսն բան աշխատութեամբ և փորձով կը լրաց, Երեւելի մարդիկ և կանայք իրենց մօրէն երեւելի չեն ծնիր: Եւսոր այսպէս կը խօսինք, վաղն ալ եթէ շարունակենք, կարելի է աւելի կարգաւ և գեղեցիկ խօսինք:

Օտարուհի. — Եսնոք միտքերը դրած են ամեն օր շատախօսութիւն ընել: Յառաջ քան ուսանիլն վարդապետ որ կ'ըսեն, ճիշտ ասոնք են: Ի՞նչ բան մը չըստվորած՝ ուսուցանելու ելած են: Եւ քեզ թէ թեւամտութիւն: Եստուած բարի վայելու մնայ ձեր նոր աստիճա-

նին: Եւսն չուսիք խօսեցէք: Եւսն իմա, չէք որ հայ կնոջ վրայ պիտի խօսէիք և հիմա խօսք գտնելու համար սար ու ձոր ընկած էք: Հայաստանէն Եւսնիկա հասաք: Օգոյշ կացէք, որ ծովերու մէջ չընկղմիք: Եւսն քիչ, ձեր ճանապարհորդութիւնն ալ նոր օրինակ բան մ'է. հեռագրէն ալ արագահաս է, որովհետեւ խօսքով, կամ աւելի լաւ է ըսել, օդային ճանապարհորդութիւն մ'է: Ի՞նչ երկիր կ'ուզէք, թափառեցէք, անոնց կանայքն ալ յիշեցէք, եթէ բան չուսիք, սակայն իմացէք, որ հայ կնոջ վրայ խօսելէն հեռացաք. վասն զի, այս մասին օրինաւոր խօսիլը ձեր խելքի բանը չէ:

Փառանքիմ. — Շատ խստութեամբ կը դատես մեր փափաքը: Օտարուհի, և կ'ուզես զայրացնել, որ կամ ամենեւին չը խօսինք և կամ օրինաւոր խօսակցութիւնը փոխենք սիրտ վերաւորող բանակառուի: Եւսն մենք չենք զայրանար, պատճառն որ, գուցէ մեր խօսքերն անկատար ըլլան, սակայն մեր փափաքը բարի է: Եւսն, մեր խօսակցութիւնն ալ պիտի շարունակենք, վասն զի համոզուած ենք, որ եթէ օգուտ չը տանանք, վնաս երբէք չենք ստանար:

Սովորիկ. — Հապա ժամանակի կուրուստը: Երեւելի թէ ձեզ համար ժամանակը պարսպ անցնելը ամենեւին նշանակութիւն չունի:

Տէգրաւուհի. — Իբր թէ ժամերդ և վայրկեաններդ բոլորը հաշուած՝ անոր հաւեմաւ կ'աշխատիս: Իբր թէ չենք տեսած, որ շատ անգամ գրքիդ կը նայիս, բայց խելքդ ուրիշ տեղ է: Իբր թէ չենք տեսած, որ շատ անգամ սուտ պարկեշտութեամբ երկար ժամանակ լուռ կը մնաս, բայց հազարէն մի անգամ եթէ բերանդ բանաս, ընկերակցիդ սիրտը կը խցոտես: Իբր

Թէ օրինաւոր խօսակցութիւնը ժամանակի կորուստ է և ժամանակի գիւտը միայն գրքին նայելն է, ոչ թէ կարգալու համար, այլ ուրիշները խաբելու : Այսուամբ սիրես, մի խափաներ, թող խօսի փառանձեմը, որ մենք ալ լսենք :

Աստուծոյ. — Այո՛, կը լսենք փառանձեմ, խօսիր հայ կանանց վրայ : Բայց չը գիտեմ հին ժամանակի, թէ այժմեան հայ կանանց վրայ պիտի խօսիս : Արովհետեւ, ես կարծեմ՝ թէ երկուքի մէջ տարբերութիւն չաւ կայ :

Փառանքի. — Այժմեան ժամանակի հայ կանանց վրայ ինչ պիտի խօսիմ, և մանաւանդ թէ ինչպէս կրնամ խօսիլ, երբ մեր խեղճ ազգը զանազան երկիրներու և ազգերու մէջ ցրուած ըլլալով՝ կանայքն ալ շատ տեղ հայու թեան անուներ միայն պահած են : Ելլուն օտարի, հագուստն օտարի, տվորութիւնն օտարի . . . և այլն և այլն : Այսօրուան օրս եթէ ամեն երկրէ մէկ մէկ հայ կին ժողովեալ պարզ կը տեսնես, որ ամենքն ալ իրարմէ կերպ կերպ տարբերութիւններ ունին : Աւելին թողնենք այժմեան կիները և հիներու վրայ խօսինք : Արգարե՛ հնութիւնը մեզմէ դարերով հեռի է և ներկայն աւելի մօտ, բայց Հայու հնութեան մէջ քաղցրութիւններ աւելի կան, քան թէ ներկայի մէջ :

Խօսողի գրութիւն. — Բայց հնութեան վրայ ինչ պիտի խօսիս : Այն ազգի չորս հազար տարուան պատմութիւնը եթէ օրերով թղթատես, հազիւ թէ քառասուն կամ յիսուն կնոջ անուն կը գտնես, և այն ալ կամ թագուհի են կամ մարտիրոսուհի : Անոնցմով ինչ կրնաս իմանար թէ հին հայու կանայք ինչպէս էին և ինչ էր հասարակ կարգի կանանց կենցաղն ու կրթութիւնը : Աստուծոյ. — Իրաւունք ունիս, խոս

րողիդու խո, հնութեան մէջ կրնե՞րու վրայ շատ խօսուած չէ, և եթէ պատմութեան մէջ տեղ տեղ կանանց յիշատակութիւն կայ, այն ալ քրիստոնէութեան տարածմանէն յետոյ է : Արովհետեւ, ես լսած եմ որ հեթանոսութեան ժամանակ՝ կինը անարգական բան մը սեպուած էր և ստրուկ, ինչպէս այժմ շատ տեղ, և քրիստոնէութիւնը միայն կանանց արժանաւորութիւնը հաստատեց : Քրիստոնէութիւնը միայն հաստատեց, որ մարդկութիւնը այն ժամանակ կատարելութեան մէջ կ'ըլլայ, երբ ոչ թէ միայն տղամարդիկ, այլ և կանայք ճշմարիտ լուսով լուսաւորուած ըլլան : Այսինքն, կանայքը մարդկութեան կէսն են, և անհնար է որ մէկ կէսը յառաջագիւ մէջ, քանի որ միւս կէսը տգիտութեան մատնուած է : Փառանձեմն ալ եթէ խօսի, ես այնպէս կը կարծեմ, որ քրիստոնէութեան ժամանակի հայ կանանց վրայ պիտի խօսի :

Արիւնի. — Քրիստոնէութեան ժամանակէն քանի՛ Հայ կնոջ անուն կա՞րող է տալ :

Փառանքի. — Շատ անուններ տալու կարօտութիւն չունինք, բաւական է միայն որ անոնց գործերը յիշենք : Այսինքն, մեր համար գործքը անունէն աւելի հարկաւոր է :

Օրբանի. — (Աթիւնիկին նայելով) անպատշաճ. Եղիշէի պատմութեան մէջ խօսելու բան մը գտած է : Բանի օր է, որ Եղիշէն ձեռքէն չը թողուր : Հա՛, եթէ օրինաւոր բան մը գտած է Հայ կնոջ համար, լսելիք չունինք : Բայց ես գիտեմ որ Հայ կանանց վրայ խօսիլը իր կարողութենէն վեր է :

Փառանքի. — Այո՛, այո՛, Եղիշէն պիտի պատմեմ և յուսով եմ, որ դուք ալ ձեր հակառակախօսութիւնը մի կողմը պիտի դնէք :

Նոյնի. — Պատմէ՛, Փառանձեմ, հակառակխօսութիւնն ալ շատ անգամ խօսակցութեան մէջ շահաւէտ է. եթէ բոլորովին կամակորութիւն չէ՛: Ս'ենք այնպէս կը հասկնանք, որ Օտուհիի եւ Սաթիիկի ըրածը աւելի խնդիրը պարզեալ համար է: Նոյնք ալ կ'ընդդռնին ինչ որ գեղեցիկ է եւ օգտակար: Պակասութիւնը միայն իրենց երկչոտութիւնն է. Նոյնք լսած են թէ խօսիլը անվայել է աղջկանց համար, բայց չը գիտեն թէ անվայելը վատ խօսքերն են եւ սուտ պարկեշտութիւնը: Եթէ խօսիլը վատ բան ըլլար, Վատուած լեզու չէր տար կանանց: Լմեն կին կամ աղջիկ լաւ բան խօսելու համար միշտ ազատ է եւ միայն անպարկեշտ եւ անվայել խօսքերն են, որ կնոջ ամեն շնորհքները կ'ոչնչացնեն: Խօսի՛ր ուրեմն եւ պատմէ՛, Փառանձեմ, մենք պատրաստ ենք ուրախութեամբ լսելու:

Փառանքիմ. — (Նշնշէի պատմութիւնը կ'առնու, ուր տեղ տեղ նշաններ գրած է, մահաւանդ ան տեղ, ուր յատկապէս Հայ կանանց վրայ կը խօսուի):

— Եւ գեղեցիկ պատմութիւնը ես չը պիտի բառ առ բառ կարդամ, այլ պիտի իմաստները ըսեմ աշխարհաբար եւ պարունակուած օգտակար հետեւութիւններն ալ յայտնեմ:

Սահակայոյ. — Շուտ ըրէ՛, Վատուած սիրեա, սիրոտ կը թռթռայ, կ'ուզեմ շուտով իմանալ թէ ինչ պիտի ըսեն Հայ կանանց համար:

Նոյնի. — Լմենք ալ ունկնդիր չըլլէ, որ պատմէ ինչ որ պատրաստ է:

Փառանքիմ. — (Պարզ ձայնով եւ ծափեր կերպարանքով). — Այլք Պարսկները տարիներով աւերեցին Հայաստանը եւ շատ նախարարազուն եւ գիւղական մարդիկ գերի տարան, Հայ կա-

նայքը ամենեւին չը յաւատահաստեցան եւ չը թուրացան, այլ մուսացան իրենց կանացի տկարութիւնը, տղամարդկանց պէս արիացան հաւատոյ պաշտպանութեան պատերազմին մէջ, ամեն մուլութեան յաղթեցին, եւ աստուածային սիրով վառուած՝ ազօթքով երկնքի դռները բացին: Ուրեմն, աստուած պաշտութիւնը եւ բարեպաշտութիւնը կանանց առաջին պարտքն է:

Լմենք. — Եւ յայն:

Փառանքիմ. — (Եւ շարունակէ) — Եւրիները առաքինութեան հարօք դարձան եւ գերուածներու ու հեռաւոր աշխարհներու մէջ կոպուածներու կանայքը կամօք կապեցին իրենց մարմնաւոր ցանկութիւնը եւ երկար տարիներ ամուսիններէն հեռի, ողջախոհութեամբ ապրեցան եւ անարատ պահպանեցին ամուսնական ուխտը: Ուրեմն ամուսնական հաւատարմութիւնը՝ կը նոյն երկրորդ պարտքն է:

Լմենք. — Եւ յայն:

Փառանքիմ. — (Եւ շարունակէ) — Հայ կանայքը Սուրբ Գիւրքը կը կարգային, իրենց զաւակները բարեպաշտութեան մէջ կը իթէին եւ ամեն վիշտ աստուածային սիրով կը քաղցրացնէին: Ուրեմն, զաւակները փափուկ հասակէն բարեպաշտութեան մէջ դաստիարակելը, մայրենի լեզուն ուսուցանելը, անոնց սրտին մէջ աստուած սիրութեան եւ մարգարեութեան զգացմունքները զարգացնելը՝ կանանց երրորդ պարտքն է:

Լմենք. — Եւ յայն:

Փառանքիմ. — (Եւ շարունակէ) — Հայ կանայքը իրենց մասներով կ'աշխատէին եւ կը կերակրուէին, իրենց պարզ եւ չափաւոր կեանքով իւրեանց ընտանեկան կենցաղավարութիւնը կը քաղցրացնէին եւ իրենց կապուած ամուսիններու համար իրենց ուժիկը կ'ուղար-

կէին : Սէրեմն, չափաւորութիւնը՝ ընտանեկան կենաց հաստատուն հարստութիւնն է, սնարարութիւնն աւճեաւործութիւնը՝ կանոնաց շրջափակ պարտքը : Սէրեմն, սան հարստութիւնը՝ կինն է, տան թագուհին՝ կինն է և օրինաւոր ընտանիքը՝ մի փոքրիկ և գեղեցիկ թագաւորութիւն է :

Լ'Էնդ. — Լ'յո, այո :

Լ'ուարդ. — Գուցէ այդ պատճառաւ է, որ սուրբ եկեղեցին ալ, պսակի ժամանակ նորափետայն թագաւոր կանուանէ, իսկ նորահարսը՝ թագուհի :

Փառանկէմ. — (Եւ շարունակէ) — Հայ կանայք չը յիշեցին իրենց առաջին վսեմութիւնքը, փափկութիւնը և ըստացուածքը : Նախարարաց կանայքն անգամ սկսան ուրախութեամբ գիւղականի կեանք վարել : Սէրեմն, կինը այնքան է որ իշխէ փափկասիրութեանը և վայելչասիրութեանը : Կէտք չէ որ անձնատուր ըլլայ փաղանցուկ բաներու, այլ սլափ տնայտի կրթութեամբ սիրտ, միտք և կամք ունենայ, որ իր ամուսնոյ, իր որդւոյ, իր ազգի և մահաւանդ Լ'ստուծոյ սիրոյ համար կարենայ հարկ երած ժամանակը ամեն բան ուրախութեամբ թողուլ :

Լ'Էնդ. — Լ'յո, այո :

Փառանկէմ. — (Եւ շարունակէ) — Հայ կանայք իրենց գեղեցիկ և առաքինի կեանքով քաղցրացուցին իրենց կապուած և բանասարկաւոր ամուսնեւորութեան ապականները մի թարեցին անոնց որտեք և անորաւոր ազգականցին Հայ գերդաստանի և Հայ հայրենաց առնունը : Սէրեմն, կինը մարդու միութարութիւնն է, գերդաստանի սիւնը և հայրենաց հաստատութիւնը : Լ'այց այս մեծ արժանաւորութեան արմատն ալ բարի դաստիարակութեան մէջ է : Ինչ տեղ բարի դաստիարակութիւն չը կայ՝ հոն կնոջ արժանաւորութիւնը

մեռած է, և ուր մեռած է այս արժանաւորութիւնը, իմացէք որ մեռած է ամենայն ինչ : Վասն զի ազգի մը կենդանութիւնը՝ առաքինի կանայքը կամ մայրերն են :

Լ'Էնդ. — Լ'յո, այո : ուրեմն առաքինի Հայ կանայքն ու մայրերը միայն կրնան ըլլալ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆԴՐՆՈՒԹՅՈՒՆԸ :

ԺԱՄՈՆԵԿԵՂՐԵԿԻՆԵՐ

Լ'մայս 17 ին, Սրբոց Գայիանեանց ամեն, կատարուեցաւ քաղաքի օրհորդաց Վարժարանին մէջ մի վայելուչ հանդէս, ուր ներկայ էին Լ'յոն, Սրբազան պատրիարքը և Լ'յո. միաբաններէն շատերը, նմանապէս և օրհորդաց ծնողքը : Հառաջագէմ օրհորդներէն մէկը կարդաց մի գեղեցիկ ճառ խահմութեան վրայ, յետոյ երկու փոքրահասակ օրհորդներ փոխադարձ հարց ու պատասխաններով բաւական բան պատմեցին քրիստոնէական ուսման գիտելիքներէն, և ապա քանի մի օրհորդներ համառօտ արամախօսութիւն մի ներկայացուցին, դպրոցաց կարեւորութիւնը բացատրելով : Լ'յո ամենէն զինի Սրբազան Պատրիարքը ազդու և համառօտ ատենախօսութեամբ կրնէրց հանդէսը, յիշեցնելով օրհորդաց ծնողներուն, որ իրենք եւս պարտաւոր են իրենց դասերաց ընտանեկան կենտոյ վրայ հսկել և այս ճանապարհով գործակցել դպրոցին, որպէս զի աշակերտութեանց ուսմանը և վարքը համահաւասար ընթացք և արդիւնաւորին Սուրբ Լ'թոնոյ խնամքները : Ծնողք շնորհակալութիւն ժողովեցին Սրբազան Պատրիարքին իւր հայրանքով խնամաւորութեան համար և ապա